



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 26 ՅՈՒՆԻՍ, 2023

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալսսս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 36

ՄԱՐԴՈՑ ԶԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԻՒՆԸ

Ամբարիշտին սրտին խորը բոյն դրած մեղքը կը յայտարարէ, թէ իրեն համար Աստուծոյ վախը գոյութիւն չունի: Այդպիսի կեղծ խօսքերով ամբարիշտը ինքզինք կ'օրօրէ, փոխանկ իր անօրէնութիւնը խոստովանելու եւ գայն ապելու: Անօրէն եւ ինքզինք խաբող խօսքեր, որոցմով ան կը լքէ իմաստութիւնը եւ բարի գործերը: Պառկած րեղը անօրէնութիւն կը խորհի, բարի ճամբուն չի հետեւիր, եւ չարէն չի հեռանար: Տէր, քու սերդ երկինքին պէս անսահման է, հաւաքարմութիւնդ՝ մինչեւ ամպերը կը հասնի: Արդարութիւնդ լեռներուն պէս բարձր է, դաբասաբաններդ՝ ովկիանոսներուն պէս խորունկ: Դուն է որ կը հոգաս մարդոց թէ անասուններուն կարիքները, Տէր: Ինչ թանկագին է հոգածութիւնդ, ով Աստուած. բոլոր մարդիկ քու թելերուդ հովանիին կ'ապաստանին: Թու քաճարիդ առաք օրհնութիւններով կը լիացնես զանոնք, շնորհքներու քու գեպէդ խմել կու տաս դուն անոնց: Որովհետեւ դուն ես կեանքի աղբիւրը. լոյսովդ է որ մենք լոյսը կը րեանենք: Մշտական ըրէ հոգածութիւնդ անոնց վրայ՝ որոնք քեզ կը ճանչնան, ու արդարութիւնդ անոնց վրայ՝ որոնք սրտով ուղիղ են: Թոյլ մի քար որ ամբարտաւան մարդիկ ընկճեն զիս, չարագործները յաջողին զիս հալածել: Հոն՝ պիտի իյնան բոլոր անոնք՝ որոնք անօրէնութիւն կը գործեն. պիտի րապալին եւ ալ բնաւ չկանգնին:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւնէ ես նեղերց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ եւ հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ եւ արարածոց եւ ինձ բազմամեղիս:



ՄԱՐԴՈՑ ՉԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՑ ԲԱՐՈՒԹԻՒՆ

Հերաքրքրական վերնագիր մըն է որ ունի այս Սաղմոսը՝ մարդոց չարութիւնը եւ Աստուծոյ բարութիւնը: Եթէ կարելի է գայն համեմատել Պօղոս Առաքեալի Գաղատացիներուն գրած նամակին 5:22-23, ուր Առաքեալը կը ներկայացնէ մարդոց պտուղները եւ Սուրբ Հոգիին պտուղները:

Երկու մասերէ բաղկացած այս Սաղմոսը կը ներկայացնէ նախ մարդոց չարութիւնը մեղքին պարճառով, եւ այդ մեղքին յայտարարութիւնը նոյնինքն մարդ ինքզինք խաբելու, թէ Աստուած եւ Աստուծոյ վախը գոյութիւն չունի: Առաջին առիթով Դաւիթ կը ներկայացնէ թէ մեղք կոչուածը թեթեւակի առնելու չենք, որովհետեւ անգամ մը որ սկսի անիկա մէկ անգամուան համար երեւոյթ մը չէ, այլ ընդհակառակը՝ անիկա կու գայ եւ արդէն բոյն կը շինէ: Այսինքն՝ մնայուն կեցութեան վիճակ: Եւ իբրեւ այդպիսին, արմարները կը սկսի նետելու, եւ ահա կ'անցնի աշխարհաբանք: Եւ ի՞նչ է այդ աշխարհաբանքը: Փոխանակ խոստովանելու այդ կատարուած անօրէնութիւնը եւ գայն ասելու, ընդհակառակը՝ կու գայ եւ կ'ըսէ, «Աստուած չկայ», եւ կամ՝ եթէ նոյնիսկ կայ, Ան չի տեսներ, կամ կարեւորութիւն չի տար ըրածներուս: Ահաւասիկ մօտեցման եղանակ մը, որ կը կոչուի կեղծիք, սուտ: Յիշենք, դրախարի պարտեզին մէջ Չարին օգտագործած խաբէբայական մօտեցման եղանակ. «Իրաւ Աստուած ըսաւ, որ եթէ ուրեք, կը մեռնիք: Չէք մեռնիր աստուածներու պէս կ'ըլլաք»: Ճիշդ այս է մէթօրը, ամենակարեւորը մարդուս միտքէն, սրտէն հանենք Աստուծոյ գոյութեան կամ Անոր նկատմամբ հաշուերութեան հասկադոցութիւնը, ալ վերջ ուրիշ բան չի մնար, եւ ահա մարդը անօրէնութիւն է որ կը գործէ: Խորքին մէջ մեղք կոչուածը կ'արձագանգէ եւ իր ձայնը լսելի կը դարձնէ, եւ փոխանակ մտածելու այդ մեղքը սրբագրելու մասին, ընդհակառակը՝ կեղծ խօսքերով, սուտով մենք գմեզ կը խաբենք, ըսելով՝ թէ Աստուած չկայ: Ինչո՞ւ Աստուած չկայ փարբերակը, որպէսզի մեր մտքէն դուրս հանած ըլլանք, հաշուերութեան խնդիրը: Երբոր որեւէ մէկուն հաշիւ փալու պարպաւորութիւնը չունիմ կամ չունենամ, ալ ով կրնայ զիս կեցնել ընելու չարութիւն: Ծննդոց գիրքին մէջ Աստուած շար յարակ կերպով կը ներկայացնէ ըսելով, «մարդուս սրտին մէջ սրտին մէջ չարութիւն կայ»: Կը նշանակէ, այսօր բոլորիս սրտերուն մէջ այդ չարութիւնը, մեղք գործելու փրամադրութիւնը կայ, բոյց ով է որ առիթ կու տայ այդ մեղքը գործելու կամ չգործելու, եթէ ոչ հաշուերութեան հասկացողութիւնը: 34րդ Սաղմոսով Դաւիթ կը յիշեցնէ, երբ կը խօսէր Աստուծոյ վախի մասին, կ'ըսէր, «Լեզուդ չարախօսութեան մի ծառայեցներ, շրթներդ նենգութիւն թող չխօսին, հեռու մնայ չարիքէն, եւ բարիք ըրէ, խաղաղութիւն կամեցիր»: Եւ ահա փոխանակ բարի ճամբուն հետեւելու, եւ բարի ճամբան Աստուծոյ ճամբան է, ընդհակառակը չարէն չի հեռանար, մինչեւ իսկ պառկած փեղը չարութիւն կը մտածէ: Անկողինը որ կայ հանգիստի համար, բայց անօրէն մարդը հանգիստ չունի, այլ՝ չարութիւն կը խորհի: Եւ ինքզինք խաբող խօսքերով կը լքէ իմաստութիւնը եւ բարի գործերը: Սա կը նշանակէ, որ մարդը պահ մը իմաստութեամբ կ'ապրէր, բայց չուզեց շարունակել, այլ լքել եւ չարութեան ու մեղքի ետեւէ երթալ:

Եւ ահա հակառակ մարդուս չարութեան, անոր դիմաց Դաւիթ կը ներկայացնէ Աստուծոյ բարութիւնը: Եւ խորքին մէջ, ոչ թէ միայն կը ներկայացնէ, այլ Աստուծոյ հետ կը խօսի, Աստուծոյ ինչպիսին ըլլալուն: Ալ չուզեր չարութեան մասին խորհիլ, այլ կեղորոնանալ Աստուծոյ ողորմութեան որ Անոր սիրոյն արփայայտութիւնն է, որ անսահման է: Աստուած ողորմած է, որովհետեւ Ան սեր է: Հերաքրքրական է, որ նաեւ ինչու այս պատկերները, երկինք: Անոր համար, որ մարդը հոն չի կրնար հասնիլ, որ չըլլայ թէ խանգարէ այդ ողորմութիւնը, այդ սերը: Որովհետեւ յարակ է, հոն ուր որ մարդուս մարը կայ, կամ ձեռքը կայ, հոն նաեւ ատերում, քանդում կայ: Դիտենք մէջ մը, հոն ուր որ մարդը գացեր է կամ կ'երթայ ուրիշ բան չընէր եթէ ոչ քանդելու, բացի այն պարագայէն երբ բարութեան ճամբէն կը քալէ, բարիին ճանապարհորդակից է: Հաւաքարմութեան՝ որ մինչեւ ամպերը կը հասնի: Հաւաքարմութեան պարագային, Ան չի սրեր, Ան չի փոխեր, անգամ մը որ խոստացաւ, ուրեմն Ան կը պահէ Իր փրումը խոստումը: Մինչեւ ամպերը կը հասնի բացարթութեան մէջ, Դաւիթ անոր մէջ կը տեսնէ Աստուծոյ հաւաքարմութիւնը ամպերու նման որ երկիրը կը ծածկեն, նոյնպէս ալ Անոր հաւաքարմութիւնը: Արդարութեան, որ լեռներու պէս բարձր է: Ոչ միայն խոստումները կը պահէ, այլ նաեւ զանոնք կը կատարէ: Այդ կատարումով արդարութիւն է որ կը հաստատուի, որ լեռներու պէս բարձր է, հաստատուն է, վեհ է, հզօր է: Այնպէս ինչպէս արդարութիւնը լեռներու պէս բարձր է, այնպէս ալ դատաստանները՝ ովկիանոսներու պէս խորունկ է: Բայց հերաքրքրական է, որ Դաւիթ Աստուծոյ ողորմութեամբ եւ սիրով կը սկսի, յետոյ աւարտիին կը ներկայացնէ Անոր դատաստանները:

Այս բոլոր ստորագելիները Դաւիթ պարզապէս չի նշեր, այլ նաեւ կը ներկայացնէ Աստուծոյ հոգածութիւնը, եւ այդ հոգածութեան բարիքներէն ոչ թէ միայն մարդն է որ կ'օգտուի, այլ նաեւ անասունները: Ահա հոգածութեան ապաւինելու: Իսկ անոնք որոնք կ'ապաւինին, առաք օրհնութիւններով կը լեցնէ զիրենք: Շնորհներու գետէն խմել կու տայ: Ովքեր են որ պտի խմեն, եթէ ոչ ծարաւիները: Յիշենք Քրիստոսի խօսքը, երանի ծարաւիներուն, որովհետեւ պիտի հագենան: Նախ ինչու ծարաւի են, որովհետեւ մեղքի պատճառով սով է որ կը փրէ, երաշտ, ուստի կարիքը կայ անձրեւի: Ահա Աստուած այդ անձրեւն է որ կը տեղացնէ, ոչ միայն սովորական անձրեւը, այլ Աստուծոյ խօսքը, իբրեւ անձրեւ, որ կ'որոգէ երաշտ արտը, որ սկսի պտուղ տալու: Դաւիթ կը խոստովանի եւ կը դաւանի, որ միակ ու ճշմարիտ կեանքի աղբիւրը Աստուած Ինք է: Եւ ահա աստուածային լոյսով է, որ լոյսը կը տեսնենք: մէկ այլ ուրիշ բացատրութիւն մը, աստուածային կեանքով որ կեանքը կ'ապրինք: Այսինքն՝ իրաւ իմաստը կեանքին, եւ նպատակը զայն ապրելուն: Ապա կը խնդրէ, որ մնայուն ըլլայ այդ հոգածութիւնը, յանկարծ այս կամ այն պատճառով չդադրի: եթէ դադրի պատճառը մարդու չարութիւնն է: Այլապէս Աստուած ողորմած է, հոգածու, հաւատարիմ, մարդասէր: Հոգածութիւնը անոնց նկատմամբ որ Չինք կը ճաչնան, եւ ճաչնան ոչ թէ միայն կայ իմաստով, այլ՝ Անոր երկիւղը ունին: Եւ արդարութիւնը անոնց նկատմամբ որ սրտով ուղիղ են, այսինքն՝ հեռու են չարէն:

Ի վերջոյ, վերջին երկու համարներով Դաւիթ խնդրանք կը ներկայացնէ Աստուծոյ ըսելով, «Թոյլ մի տար որ ամբարտաւան մարդիկ ընկճեն զիս, չարագործները զինք հալածեն»: Բայց արդէն անմիջապէս կ'արտայայտուի ըսելով, «Անոնք պիտի իյնան, եւ ալ բնաւ պիտի չկանգնին»: